# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԿՀ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26

ք. Գյումրի «09» մարտի 2026թ.

«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն, ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Մալխասյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էքվիլիբրիում» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վահան Հովսեփյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Անշարժ գույքի գնահատման ծառայությունների» մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 827 000** (մեկ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն.

- Առաջին չափաբաժնի՝ «Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝ հողեր»-ի համար՝ 1432800 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր )
- Երկրորդ չափաբաժնի՝«Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝ շենք շինություններ»-ի համար՝ 394200 (երեք հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր)

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Պատվիրատուն վճարումը կատարում է իր պահանջով՝ էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով ներկայացված աշխատանքների կատարման պահանջ-հայտերի հիման վրա փաստացի կատարված աշխատանքի դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա(ֆինանսական միջոցները հատկացվելուց հետո), սակայն 25.12.2026 թվականի դրությամբ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների

հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի «Գյումրու
համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351648
ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Էքվիլիբրիում» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս,
3-րդ շենք, 16 բն.
ՀՎՀՀ՝ 00166453
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220311960979000

Վ. Հովսեփյան
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված 1
« 09 » մարտի 2026թ. կնքված
**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26** ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 70331800/501 | Համաձայն **Հավելված 1.1**-ի | դրամ | 1 432 800 | 1 | Ք. Գյումրի, Վարդանանց 1 | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ **համաձայնագիրը**) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: |
| 2 | 70331800/502 | | դրամ | 394 200 | 1 | Ք. Գյումրի, Վարդանանց 1 | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ **համաձայնագիրը**) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի «Գյումրու
համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351648
ՀՎՀՀ 05511159

Կ. Մախասյան
_______________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էքվիլիբրիում» ՍՊԸ
Ք. Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս,
3-րդ շենք, 16 բն.
ՀՎՀՀ՝ 00166453
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220311960979000

Վ. Հովսեփյան
_______________________
(ստորագրություն)
Կ.Տ.

# Տեխնիկական բնութագիր

«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ գնահատման ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ») մատուցվելու են գույքի տեսակների, անվանումների ու գտնվելու վայրերի (հասցեներ) վերաբերյալ տեղեկատվությունը պարունակող՝ Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրվող գնահատման առաջադրանքի հիման վրա:

Ըստ անհրաժեշտության առաջադրանքը կարող է պարունակել գույքի վիճակի, դրա նկատմամբ գրանցված սահմանափակումների, դրա նպատակային ու գործառնական նշանակության մասին տեղեկություններ և այլ նյութեր:

**1. Ծառայությունները պետք է մատուցվեն ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ներառյալ.**

-«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին»

-«Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 24 օգոստոսի 2022 թվականի N 1355-Ն որոշումը,

-«Մասնավորեցվող և օտարվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 27-ը մարտի 1998 թվականի N 209 որոշումը:

- Այլ իրավական ակտեր,որոնք ենթակա են կիրառման կախված գնահատվող գույքի տեսակից, գույքի կարգավիճակից, գնահատման նպատակից և գնահատման համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներից:

**2.Գնահատման ստանդարտներ.**

**Կատարողը պետք է ունենա Ծառայությունների մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան որակավորում, իսկ իրավաբանական անձ հանդիսացող կատարողը պետք է որպես գործատու ունենա նման որակավորում ունեցող համապատասխան հիմնական աշխատող (աշխատողներ):**

Կատարողը պետք է լինի անկախ, ծառայությունները պետք է մատուցի Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի համաձայն, որտեղ կնշվեն գնահատվող գույքի անվանման, նպատակային և գործառնական նշանակության մասին տվյալներ:
Անշարժ գույքի գնահատումը իրականացնելիս պետք է պահպանվեն ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտը, որը պարունակում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանակական և որակական բնութագրերը, գույքի գնահատման մեթոդները, գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ պահանջները, գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները:

**Ծառայությունների արդյունքները պետք է ձևակերպվեն գնահատման հաշվետվություններով (էլեկտրոնային տարբերակով և 2 օրինակ տպագիր տարբերակով), որոնք պետք է պարունակեն Կատարողի անվանումը, իրավաբանական հասցեն և գնահատվող գույքի.**

**Գնահատման առաջադրանքը.**

- ելակետային տվյալներն ու դրանք հավաստի աղբյուրներից ստանալը հավաստող փաստաթղթերը,
- նկարագիրը և տեղազննության արդյունքները (ներառյալ՝ բավարար չափով լուսանկարներ),
- տեղազննության ու գնահատման ամսաթվերն ու տարեթվերը,

- ստացված շուկայական արժեքի որոշման մեթոդաբանությունն ու դրա ընտրության հիմնավորումները,
- վերլուծության արդյունքում ձևավորված շուկայական արժեքի գնահաշվարկները,
- գնահատման համար օգտագործվող փաստաթղթերի ցանկը:

Հաշվետվությունները պետք է կազմված լինեն գույքի գնահատման գործընթացներին անծանոթ անձանց համար պարզ և ընկալելի ձևով, իսկ դրանց տպագիր և էլեկտրոնային տարբերակները Կատարողը պետք է առձեռն ներկայացնի Պատվիրատուին՝ ՀՀ, ք.Գյումրի,Վարդանանց 1՝ սահմանված կարգով փաստաթղթավորված վիճակով:

Սահմանված ժամկետներում Ծառայության արդյունքները Պատվիրատուին չներկայացնելու, կամ ոչ պատշաճ կարգով ներկայացնելու դեպքում Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի նաև դրա վերաբերյալ գրավոր պարզաբանում: Ներկայացված պարզաբանումը Պատվիրատուի կողմից ոչ հիմնավոր համարվելու դեպքում՝ ուշացված ժամկետների մասով կիրառվելու են գնման պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Ծառայությունների մատուցման արդյունքում Պատվիրատուին ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ կամ այլ թերություններ հայտնաբերվելու դեպքում Կատարողը պարտավոր է այդ մասին ծանուցվելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումները (շտկումները, փոփոխությունները)՝ Ծառայությունների արդյունքները սահմանված կարգով վերստին ներկայացնելով Պատվիրատուին:

## 1-ԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆ

| Գյումրի համայնքին պատկանող գնահատման ենթակա անշարժ գույքի (**հողատարածքների**) սանդղակներ: | | |
|---|---|---|
| **Չկառուցապատված հողամաս /բնակավայրերի բնակելի կառուցապատման, բնակավայրերի հասարակական կառուցապատման, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական կառուցապատման և ընդհանուր օգտագործման/** | | |
| **Անվանում** | **Մակերես** | |
| Հողամաս | 0-50 քառ. մետր | |
| Հողամաս | 50-200 քառ. մետր | |
| Հողամաս | 200-500 քառ. մետր | |
| Հողամաս | 500-1000 քառ. մետր | |
| Հողամաս | 1000 և ավելի քառ. մետր | |
| | | |
| **Գյուղատնտեսական նշանակության** | | |
| Հողամաս | Մինչև 1000 քառ. մետր | |
| Հողամաս | 1000 քառ. մետր -5000 քառ. մետր | |
| Հողամաս | 5000 քառ. մետր -10000 քառ. մետր | |
| Հողամաս | 5000 քառ. մետր -10000 քառ. մետր | |
| Հողամաս | 10000 քառ. մետր և բարձր | |

**Գնահատման ենթակա են առավելագույնը 60/վաթսուն/ միավոր հողամասեր:**

*** Չկառուցապատված հողամասերի /բնակավայրերի բնակելի կառուցապատման, բնակավայրերի հասարակական կառուցապատման, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական կառուցապատման / գնահատումը իրականացվում է հողատարածքները աճուրդով և վարձակալության տրամադրելու**

**համար, ինչպես նաև գյուղատնտեսական և ընդհանուր օգագործման նշանակության հողերը վարձակալության տրամադրելու համար:**

**2-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ**

| Գյումրի համայնքին պատկանող գնահատման ենթակա անշարժ գույքի (**շենք շինությունները իրենց զբաղեցրած հողատարածքներով**) սանդղակներ: | |
|---|---|
| **Անվանում** | |
| Շինություններ | 0-50 քառ. մետր |
| Շինություններ | 50-200 քառ. մետր |
| Շինություններ | 200-500 քառ. մետր |
| Շինություններ | 500-1000 քառ. մետր |
| Շինություններ | 1000 քառ. մետր և ավել |

**Գնահատման ենթակա են առավելագույնը 15/տասնհինգ/ միավոր շենք շինությունները իրենց զբաղեցրած հողատարածքներով :**

**Աշխատանքների կատարման ծավալների մասին:**

**Կատարողը պարտավոր է՝**

**առ 31.03.26թ. թվականը իրականացնել աշխատանքի 40 տոկոսը:**

**առ 30.04.26թ. թվականը իրականացնել աշխատանքի 70 տոկոսը:**

**առ 31.05.26թ. թվականը իրականացնել աշխատանքի 100 տոկոսը:**

Հավելված N 2
«09» մարտի 2026թ. կնքված
ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 70331800/501 | << Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝ հողերի գնահատում >> | Սույն պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | | | | | |
| 2 | 70331800/502 | <<Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝ շենք շինությունների գնահատում>> | Սույն պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | | | | | |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց hր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351648
ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան
-----------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էքվիլիբրիում» ՍՊԸ
Ք.Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս,
3-րդ շենք, 16 բն.
ՀՎՀՀ՝ 00166453
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220311960979000

Վ. Հովհաննիսյան
-----------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*« 09 » մարտի 2026թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 2026 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«09» մարտի 2026 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2026թ. ______________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«        »                2026թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _________________________-ի և ________________________-ի միջև «--»  20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը   կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_______________________________________ ____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»  20 թ.

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26 ծածկագրով 2026 թվականի մարտի 9-ին կնքված պայմանագրի**

ք.Գյումրի

«09» մարտի 2026

«Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ»-ն ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Մալխասյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետև «Պատվիրատու»), մի կողմից, և «Էքվիլիբրիում» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վահան Հովսեփյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 09 մարտի 2026թ. կնքված ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26 ծածկագրով գնման պայմանագրի 7.1 և 7.16 կետի դրույթները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին «09» մարտի 2026 հաստատել լրացուցիչ վճարման ժամանակացույց ըստ հավելված N2-ի, որի միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշվող ծառայությունների և դրանց քանակների ձեռք բերման համար:
2. Սույն համաձայնագիրը համարվում է ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերեն, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
4. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
5. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

### ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության<br>Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ<br>ք. Գյումրի, Վարդանանց հր. 1<br>ՀՀ ՖՆԳՎ<br>Հ/Հ 900212351648<br>ՀՎՀՀ 05511159 | «Էքվիլիբրիում» ՍՊԸ<br>Ք. Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս,<br>3-րդ շենք, 16 բն.<br>ՀՎՀՀ՝ 00166453<br>«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>Հ/Հ 220311960979000 |
| Կ. Մալխասյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Վ. Հովսեփյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 2
«09» մարտի 2026 թ. կնքված
ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/26 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 70331800/501 | << Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝ հողերի գնահատում >> | | X | 500000 | | 1432800 | | | 1432800 | | | 1432800 | | 1432800 |
| 2 | 70331800/502 | <<Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝ շենք շինությունների գնահատում>> | | X | 150000 | | 394200 | | | 394200 | | | 394200 | | 394200 |

Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում **փաստացի մատուցված ծառայությունների 100%-ի չափով**՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի «Գյումրու
համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1
ՀՀ ՖՆԳՎ
Հ/Հ 900212351648
ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էքվիլիբրիում» ՍՊԸ
Ք. Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս,
3-րդ շենք, 16 բն.
ՀՎՀՀ՝ 00166453
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220311960979000

Վ. Հովսեփյան
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.